ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԵԱՆ ՈՒՐՈՒԱԿԱՆՆ Է ՇՐՋՈՒՄ

ԱՐԵՒԻԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼ ԷԼ ՄԷԿ ՕՐՈՒԱՅ ՄԷՋ ԵՐԻՑՍ ՈՒՐԱՑԱՒ ՔՐԻՍՏՈՍԻՆ, ԲԱՅՑ ԴԱՍՈՒԵՑ... ՍՐԲԵՐԻ ՇԱՐՔԸ

«Դէ խմի, էֆ արա շարունակ, աշխարհը խալի է ոտիդ տակ»՝ էպիկուրեան փիլիսոփայութեան բրբեմնեւեան տարբերակն էր իշխում մարդկանց սրտերին եւ ուղեղներին, երբ ճայթեց Ղարաբաղեան շարժումը: Ոտի ելան մեծ ու փոքր, սթափեցին անգամ «լաւ բեֆչիները»՝ ետ հրելով սեւ խաւիարն ու գունատը կրեմները: Ազգային ոգին էր զարթնում հայ մարդու մէջ՝ ի դէմս կորցրած իրաւունքների վերականգնման արդարացի ձգտման:

Համախմբուել էր ողջ հայութիւնը: Բոլորը Արցախի համար մէկ բռունցք դարձած եղբայրներ էին՝ չերմ հոգատար մէկը միւսի նկատմամբ: Սրճարանատէրն անվճար սընունդ էր հիւրասիրում, վարորդը քաղաքի մի ծայրից միւսը անվճար ուղեւորներ տեղափոխում, տնային տնտեսուհին վերջին ալիւրից կարկանդակ էր թխում ու բերում թատերական հրապարակ:

Ի՞նչ պատահեց, ու՞ր կորաւ սէրն ու միաբանութիւնը: Ասես անտարբերութեան ուրուականն է շրջում Հայաստանում: Այլեւս ժողովրդի՝ զարկերակը տրոփում է միայն առօրեայ՝ ստամոքսի եւ զրպանի հոգսերի ռիթմով. ժողովուրդը՝ արտաքին աշխարհի նկատմամբ հաւատազրկուած ու յուսալքուած «գլուխ չդնելու» աստիճան. ժողովուրդ, որին դաղարել են հետաքրքրել Արցախը եւ այն խնդիրները, որոնց համար նա պայքարում էր այնպէս իրաւացիօրէն: Այսպիսի բեւեռային շրջադարձ կարող էր կատարուել միմիայն զօրեղ ազդակների ներգործութեան հետեւանքով: Այլապէս անգամ անհատը միանգամից չի ընկնում հոգեկան ճգնաժամի մէջ, էլ ուր մնաց՝ մի ամբողջ հանրութիւն:

Պատճառները հասկանալուց առաջ նախ պէտք է գտնել դրանց բանալին: Անշուշտ, վիճարկելի չէ, որ ներկայիս կենսական ծանր պայմանները ստեղծում են որոշակի ճնշուածութիւն, սակայն համընդհանուր հիասթափութեան, հաւատազրկման եւ անտարբերութեան հիմնամեխը «ստամոքսի» շրջանակներում չէ, ինչպէս հարցն այս, զոհեկացուելով, վերին ատեաններից մատուցում է ժողովրդին: Եւ նշուած երեւոյթների դասական բացատրութիւնները, Եւ մարդկանց հետ զրոյցները յանգեցնում են հետեւեալ հարցադրմանը. **նոր իշխանութիւնները իրականացնո՞ւմ են ընտրողների, ասել է, թէ՝ ժողովրդի ակնկալիքները, որքանո՞վ են իրագործում իրենց իսկ նախընտրական ծրագրերը:**

Այս խնդրի շուրջ մեկնաբանութիւնները կարող են լինել տարբեր՝ ըստ իշխանութեան վարած քաղաքականութեան նկատմամբ հասարակական-քաղաքական հոսանքների մօտեցման, որից եւ վերանալով, փորձեմ ներկայացնել իրողութիւնները անաչառ, ընդհանրական գծերով:

«ՂԱՐԱԲԱՂ, ՊԱՅՔԱ՞Ր, ՊԱՅՔԱ՞Ր ՄԻՆՉԵ՞Ի ՎԵՐՋ» (Ատոմ Տէր Պետրոսեանի կոչը 1988-1990 թուականներին)

Ի դէմս այն փաստի, որ ազգի ամենազգայուն նեարդն էր շօշափում երեք տարի շարունակ, նոյն առաջնորդները, անցնելով իշխանութեան գլուխ, հենց առաջին ամիսներին արմատապէս փոխեցին իրենց դիրքորոշումը: Նախ, Արցախի համար չնախատեսուեց համակողմանի ծրագիր: Այնինչ տնտեսական եւ ռազմական շրջափակումների հետեւանքով թուլացած մարզը կարիք ունէր պետական հովանաւորութեան: Գէս նախագահը սկսեց հարցը դնել այսպէս. «Արցախը ինքը պէտք է զբաղուի ինքնապաշտպանութեան հարցերով, քանի որ դա նրա ինքնորոշման խնդիրն է»: Նմանօրինակ մօտեցման հակառակ տեսակէտը պնդող փոքրաթիւ ձայները ճնշում էին նորընտիր առաջնորդին հնազանդ մեծամասնութեամբ: Պետական լրատուական միջոցները, անմիջապէս իւրացնելով շրջադարձի ոգին, Արցախին յատկացնում էին միայն հինգերորդ-վեցերորդական տեղեր: «Մի ծաղկով գարուն բերած»՝ նոյն գործող անձանց նախաձեռնութեամբ 89ի Դեկտեմբերի 1ի Հայաստանի եւ Արցախի վերամիաւորման մասին ընդունած որոշումը կրում էր սոսկ ձեւական բնոյթ:

Շատերը գլխի էին ընկնում, որ Արցախը յանձնւում է բախտի քմահաճոյքին: Հարցի նկատմամբ պետական այրերի նոր մօտեցման եւ, միւս կողմից, Արցախից հասնող տրխուր տեղեկութիւնների միջեւ ծագող հակասութիւնները ժողովրդի մէջ ամրապնդում էին իշխանութեան հասնելու համար հիմնահարցը որպէս խաչ օգտագործելու ենթադրութիւնը: Զաւեշտով գնահատուող նոր իմաստը՝ «մինչեւ աթոռ»՝ տեղիք էր տալիս հիասթափութիւնների, դառնալով նաեւ բարոյալքման հիմնարար աղբիւրներից մէկը, զործօններ, որոնք հեշտացնում էին Ղարաբաղի «բեռից» վերեւների ազատուելու ձգտումը ներքեւների վզին փաթաթելու հոգսը:

Իրողութիւններն այլ կերպ կը գնահատուէին, եթէ ի սկզբանէ ժողովրդին ասուէր ճշմարտութիւնը՝ այն, որ նոր դիրքերից այլ կերպ երեւաց Ղարաբաղի հիմնահարցը եւ սարսափեցրեց պետական այրերին, զի նրանք, վերջին հաշուով, մէկ քայլով ղեկի անցած երէկուայ «ուղեւորն» էին: Խուսափեցին, քանի որ Արցախն էր նրանց քաղաքական կապիտալի հիմնաքարը եւ որը միանգամից կորցնելու դէպքում կը կորցնէին նաեւ զրաւած դիրքերը: Սակայն, ցաւօք, նոր իշխանաւորները իրենց դասերն առել էին խորհրդային քաղաքականութիւնից: Անմիջապէս ձեռնարկուեց երեքամեայ պայքարի ընկերոջ՝ ժողովրդի աչքին փոշի ցանելու, «գործունէութիւն»:

Իրականութիւնը ներկայացում էր անպարարի հմտութեամբ, այն վարպետօրէն հողարկելով փոփոխուող կարգախօսերով (յատկապէս արժանին պէտք է մատուցել ժողովրդավարական, այդ թւում եւ Ադրբէջանի ուժերին ապաւինելու զաղափարի հեղինակներին): Հայ ժողովրդին քարոզւում էր արդէն այլ՝ անկախութեան զաղափարը: Այնպէս որ մինչ զարնան ողբերգական անցքերը ժողովուրդն արդէն «կերել ու մարսել» էր այս բարոյական ապտակը, եւ այժմ մի մասն արդէն իշխանութեան ուղած ձեւով է նայում Արցախի խնդրին: «Հակաճառողներին» լաւ սովորեցրած զինուորի պէս իսկոյն վրայ են բերում «լաւագոյն դէպքում» թէ՝ «ղարաբաղցին ինքը թող կռուի», իսկ ընդհանրապէս «ինչ Ղարաբաղ-մարաբաղ, իսկի մեզ չենք կարում պահենք»:

Այնուհանդերձ, Արցախի հարցը Հայաստանում հիմնովին չի վերացւում. ո՛չ ազգի ճակատագրի համար չափազանց մտահոգութեան պատճառով: Այլ այն լարախաղացի ձեռնափայտի նշանակութիւնն ունի նոր իշխանաւորների համար: «Նեղն ընկած պահին» այլուրեքութեան «հրաշալի» պատրուակ է, քաղաքական հեղինակութեան «բալիսման»: Ահա, ինչպէս այժմ, նախագահական ընտրութիւնների օրերին, երբ Արցախի նկատմամբ ամիսներով պահպանուող լռութեանը հանրապետութեան առաջնորդը լիակատար փոխհատուցում է ընդգծուած մտահոգութեամբ, ընդ որում, այս անգամ բացելով իր «խաղաթղթերը»: Դէ ինչ, ժողովրդին իշխող անտարբերութեան մըրդին նոլորտում կարելի է եւ վստահ զգալ: Այնուհանդերձ, միաժամանակ, հասարակութեան յանկարծ եւ անըսպասելի արթնանալուց խուսափելու համար ստեղծւում են ապահովագրութեան երաշխիքներ, ինչպիսին, օրինակ, Արցախի ինքնորոշման իրաւունքը, Դեկտեմբերի 1ի որոշումն ու ռազմավարական այլ հարցեր անտեսող կոմունիկէի պատշաճ մակարդակով կազմակերպուած քարոզչութիւնն է՝ ընդհուպ ճանաչում գտած այլազգի «ժողովրդավարների» կատարմամբ:

Շարունակուող պատեհապաշտ քաղաքականութիւնը, բնականաբար, բացասաբար է անդրադառնում ոչ միայն բարոյա-հոգեբանութեան վրայ: Իւրաքանչիւր չհաշուարկուած քայլ պատճառ է նոր տառապանքների եւ արգելակների ստեղծման՝ նաեւ ապագայ սերունդների համար: Թերեւս արժէ յիշատակել, թէ ինչ թեթեւամտութեամբ են տարւում սիրախաղերը Թուրքիայի հետ: Այսօր անգամ զործարար առեւտրականները ցաւով նկատում են, թէ ինչպէս հանրապետութեանը ոչինչ չտուող առեւտրի հետեւանքով տարիներով դատարկ հայկական տարածքները սկսում են աշխուժանալ թուրք բնակիչների յայտնուելու հետեւանքով:

«ՎԵՐՋ «ՆԱԻՐԻՏ» ԵՂԵՌՆԻՆ» (1989թուականի կարգախօսերից)

Ոռաէս համատարած անտարբերութեան վկայութիւն արժէ փաստել բնապահպանութեան հարցերի նկատմամբ հասարակութեան ներկայիս մօտեցումը: Ըստ երեւոյթին Ղարաբաղի նկատմամբ դիրքորոշման շրջադարձը այնպիսի «ազդեցիկ» զործօն է, որ միւս «մանր» դաւաճանութիւններին մարդիկ վերաբերւում են պարզապէս «մատների արանքով»: Ժողովրդի համար այսօր միեւնոյն է, «Նաիրիտը» կը բացուի, կամ փակման յետեւում նախաձեռնողները ինչ հաշուարկ են թաքցնում: Այնպէս ինչպէս, որ ԱԷԿի բացումը յուզում կ'առաջացնի միայն բնապահպանութեան հարցերով զբաղուողների նեղ շրջանում:

Ցաւալի է, բայց սա՛ է ճշմարտութիւնը, ընդամենը ամիսներ առաջ օդի եւ շրջակայքի մաքրութեան համար կիլոմետրեր ձգուող բազմամարդ շարասիւներից յետոյ:

«ԻՍԿ ՄԵՐ ԿՈՂՔԻՆ ԿԱՆԳՆԱԾ ՇԱՏ ՏՂԱՆԵՐ ԱՅԴՊԷՍ ԷԼ ՉԵՆ ՍՏԱՆՈՒՄ ՊԱՇՏՕՆՆԵՐ»

Համայնավարների օրօք աշխատանքային կարիերայի ճանապարհն անցնում էր կուսակցութեան զաղափարներով յօրինուած նոյն «կամուրջով», բնականաբար մէկի համար կարճ, միւսի համար՝ երկար: Կամրջի միւս ծայրում յայտնուածների մէջ հատուկէնտ էին բարեկիրթ, իրազեկ մասնագէտները: Դրա փոխարէն բարգաւաճած կաշառակերութիւնը սոցիալական աղէտաբեր չարիք էր դարձել:

Հին վարչակարգի տապալման մէջ մարդիկ տեսնում էին նաեւ այդ չարիքի վերացումն ու նոր իշխանութիւններից ակնկալում էին արդարութեան վերականգնում՝ նկատի ունենալով «ժողովրդավարների» նախընտրական ծրագրերն ու դրանք իրագործելու «տղերքի» պատրաստակամութիւնը:

Սակայն այս հարցում եւս չարդարացան ժողովրդի յոյսերը՝ ի վերջոյ տեղի տալով ծայրայեղ հիասթափութեան:

Ի սկզբանէ կադրերի ընտրութեան հարցում տիրեց կամայականութիւն: Նախ ընդհանրապէս մոռացուեց կարիերայի ճանապարհի մասին, անտեսուեց նաեւ մասնագիտական կարողութիւնների առաջնահերթ խնդիրը: Առաջնութիւնը տրւում էր շարժման ակտիւ մասնակիցներին, յարողներին՝ չտարբերակելով, որ աշխատանքային եւ հասարակական գործունէութիւնը առանձին, ընդհանուր կէտեր չունեցող բնագաւառներ են: Ցայսօր առաջւայ պէս շատ պատահական մարդիկ յայտնւում են կարեւոր, պատասխանատու աշխատատեղերում: Վերեւների «սպրդումները», մինչեւ վերջին օղակները հասնելը, բնականաբար, սարից զլորուող ձնակոյտի պէս ուռճանում են ի հաշիւ **հաջնազարների**: Ոչ համապատասխան կադրերի կոյտը բարդացնում է առանց այդ էլ բարդ, ծանր շրջանը, ձգձգում այն՝ հարցականի տակ դնելով մեզ յուզող շատ խնդիրների լուծումը:

Վճիռներ բողոքարկելու, պատասխանատուութեան կանչելու, կարգուկանոն հաստատելու հին համակարգը վերացուած է, իսկ նորի բացակայութիւնը բոլոր օղակներում ստեղծել է անիշխանութիւն: Այս անկեան տակ «պետական շահերի մըտահոգութեամբ» Գերագոյն Խորհրդում տարուող բննարկումներից մէկ մտապահուած միտք է թեւածում ժողովրդի մէջ՝ «իսկ երեք տարի մեր կողքին կանգնած շատ տղաներ էլ չեն ստանում պաշտօններ»:



ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԻՒՆ՝ ՆԵՈԲՈԼՇԵՒԻԿԵԱՆ ՁԵՒՈՎ

Ժողովրդին «կոտրելու զործում» միչ դեր չխաղաց եւ անհանդուրժողականութիւնը, «ծաղկելով» մէկ կազմակերպութեան՝ ՀՀՇի, դրութեան միակ տէրը լինելու հետեւանքով եւ յիշեցնելով քսանական թուականները: Այս երեւոյթն ունի նաեւ ներքին պատճառ. մասնաւորապէս այն, որ պետական համակարգից հեռու կանգնած ժարդիկ, անցնելով իշխանութեան գլուխ, բախուել են ամենեւին այլ իրողութեան: Մի կողմից սեփական կարողութիւնների եւ իրական դժուարութիւնների միջեւ ծագող հակասութիւնը, միւս կողմից նոր դիրքի ընձեռած զայթակղիչ հնարաւորութիւնների նկատմամբ անզօրութիւնը նրանց «հասցրել է» մատ թափ տալու սովորութեան: Սրա հետ մէկտեղ նոր իշխանաւորների խօսքերի եւ զործերի ճշմարտութիւնը խուսանաւում է ոչ միայն նախընտրական դիրքորոշումից, այլեւ անկարողութեան հետեւանքով խեղտում ընթացիկ հարցերում, ձեռք բերելով մըշտապէս լող տալու յատկութիւն: Խորհրդարանն ընտրուած է մաժորիտար կարգով: Հանրապետութեան համար բախտորոշ խնդիրները լուծում են մէկ անձի թելադրանքով եւ նրա «կուսակիցների» ձայնարկմամբ: Պետական որեւէ կառուցուածք փոփոխուած չէ. պարզապէս նոր «կուսակցութիւն» է զործում հնի փոխարէն: Թէեւ ՀՀՇն վայրէջք է ապրում եւ առանձին հեղինակութիւն չունի ժողովրդի մէջ, բայց դա այնքան էլ կարեւոր չէ, քանի որ այդ կազմակերպութիւնը «ներծծուած է» պետական օղակներում, ուր եւ հարցերը լուծւում են ըստ գլխաւոր հրամանատարի ցուցման: Հայաստանում այս իրավիճակը կանխատեսում էր զրող Սելիունինը, երբ հարցազրոյցներից մէկում ամիսներ առաջ զգուշացրեց. «Ես լաւ եմ վերաբերւում ձեր ԳԽ նախագահին: Բայց յիշեցէք երիտասարդ Ֆիդելին՝ անարդարութեան դէմ պայքարող մարտիկին: Այնտեղ, ուր բացակայում են մասնաւոր սեփականութիւնը եւ բազմակուսակցականութիւնը՝ փրչանում են անգամ լաւագոյն մարդիկ»:

ՃԳՆԱԺԱՄԸ ՁԵՌՆՏՈՒ Է, ԻՍԿ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Չհաշուարկուած, պատեհապաշտ քաղաքական քայլերի մակերեսային «ծաղկաքաղն» անգամ թոյլ է տալիս ենթադրելու, որ համընդհանուր անտարբերութեան երեւոյթը ձեռնտու է հեղինակներին, քանի որ **ազգային պետական ծրագրի, արտաքին ու ներքին քաղաքականութեան եւ համապատասխան զաղափարախօսութեան բացակայութեան պայմաններում, քաղաքականապէս ակտիւ հասարակութիւնը իրենից վտանգ է ներկայացնում:** Ահա թէ ինչու հասարակական-քաղաքական կազմակերպութիւնների մասին օրէնքը սկզբում չընդունուեց: Կազմակերպութիւնները պաշտօնապէս ճանաչուեցին միայն Յուլիսին, երբ հասարակութիւնն արդէն «ճաշակել էր» իշխանութեան դառը «պտուղները» եւ խորապէս «ազդուած»՝ առանձնակի հաւատ չէր տածում «նոր քաղաքականների», դրանց բրտում եւ ազգային կուսակցութիւնների նկատմամբ:

Այս համատարած հոգեկան ճգնաժամն ունի դրամատիզմ, որի խորութիւնն ու սրութիւնը լիովին ընկալելու համար պէտք է զնահատել երամեայ պայքարի եւ նրա առաջնորդների նկատմամբ ժողովրդի ունեցած վիթխարի հաւատը: Դրա փոխարէն բնատրուել է անտարբերութիւնը, սակայն եթէ դա է լինելու հանրապետութեան նախագահի ընտրութիւններում որոշիչը, եւ եթէ կրկին սխալուելու է ժողովուրդը, ապա այս անգամ արդէն անկոահելի է նոր փորձութիւնների ոլորապտոյտը, առաւել եւս անենթադրելի՝ հետեւանքները: